



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«02» ապրիլի 2020թ.

№ 211167-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՔՍԱՏՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԻ ԽՈՒՄԲ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 47-րդ հոդվածի 8-րդ մասով, «Մաքսային ծառայության մասին» օրենքի 44-րդ հոդվածի 3-րդ մասով, մինչև 2020 թվականի փետրվարի 22-ը գործող «Մաքսային ծառայության մասին» օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 6-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի 2020 թվականի թիվ 25/2020 եզրակացությունը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Ծառայողական կարգապահությունը խախտելու համար Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի Հարավային մաքսատուն-վարչության ներքոհիշյալ աշխատակիցների նկատմամբ կիրառել «դիտողություն» կարգապահական տույժը.


- 1) մաքսային գործառնությունների բաժնի գլխավոր մաքսային տեսուչ Լաուրա Խուդավերդյան,
- 2) Մեղրիի մաքսային կետ-բաժնի 1-ին բաժանմունքի պետ Վալերիկ Գասպարյան,
- 3) Մեղրիի մաքսային կետ-բաժնի 1-ին բաժանմունքի գլխավոր մաքսային տեսուչ Միհրան Հովհաննիսյան,
- 4) Մեղրիի մաքսային կետ-բաժնի 1-ին բաժանմունքի ավագ մաքսային տեսուչ Ժորա Ավետիսյան,
- 5) Մեղրիի մաքսային կետ-բաժնի 1-ին բաժանմունքի ավագ մաքսային տեսուչ Լաուրա Հարությունյան,



- 6) Մեղրիի մաքսային կետ-բաժնի 2-րդ բաժանմունքի գլխավոր մաքսային տեսուչ Հովհաննես Ամիրխանյան,
- 7) Մեղրիի մաքսային կետ-բաժնի 3-րդ բաժանմունքի պետ Հայկ Մելքումյան,
- 8) Մեղրիի մաքսային կետ-բաժնի 3-րդ բաժանմունքի գլխավոր մաքսային տեսուչ Վանիկ Մարտիրոսյան,
- 9) Մեղրիի մաքսային կետ-բաժնի 3-րդ բաժանմունքի մաքսային տեսուչ Անի Գաբրիելյան,
- 10) Մեղրիի մաքսային կետ-բաժնի 4-րդ բաժանմունքի գլխավոր մաքսային տեսուչ Մանվել Ավագյան,
- 11) Մեղրիի մաքսային կետ-բաժնի 4-րդ բաժանմունքի գլխավոր մաքսային տեսուչ Ղուկաս Համբարձումյան:

2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ Կարինե Գրիգորյանին՝ սույն հրամանը իրազեկել ողջ անձնակազմին:

Recoverable Signature

X 

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

